Արձանագրություն

«ՍԵՆԴ ՈՐԼԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Լուսառատի ավազի հանքավայրի շահագործման ընդլայնման նախագծի աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային քննարկում /1-ին լսում/

ք. Վեդի **22.12.2023թ.**

2023 թվականի դեկտեմբերի 19-ին, ժամը 15:00-ին«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ և ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշման հավելվածի համաձայն, ՀՀ Արարատի մարզի Վեդու համայնքապետարանի վարչական շենքում տեղի ունեցավ «ՍԵՆԴ ՈՐԼԴ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Լուսառատի ավազի հանքի շահագործման ընդլայնման նախագծի աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկում (1-ին լսում):

Հանրային քննարկմանը մասնակցում էին Վեդու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Հ.Ստեփանյանը, Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Շ. Բաքոյանը, համայնքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ներկայացուցիչներ, Լուսառատ բնակավայրի վարչական ղեկավար՝ Ս. Ֆարֆարյանը և բնակիչներ, «ՍԵՆԴ ՈՐԼԴ» ՍՊԸ –ի տնօրեն՝ Կ. Սարգսյանը և մի շարք աշխատակիցներ, ներկայացուցիչներ, և փորձագետ՝ Ա. Ծատուրյանը, (մասնակիցների ամբողջական ցանկը կցվում է արձանագրությանը):

Վեդու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հ. Ստեփանյանը հայտարարեց հանրային լսումների վերաբերյալ պաշտոնական տեղեկատվությունը և ներկայացրեց համայնքապետարանի կողմից պատասխանատու ներկայացուցիչ՝ Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Շ. Բաքոյանին:

Այնուհետև խոսքը փոխանցվեց բնապահպանական անկախ փորձագետ՝ Ա. Ծատուրյանին, վերջինս ներկայացրեց «ՍԵՆԴ ՈՐԼԴ» ՍՊԸ-ի Լուսառատի ավազի հանքի շահագործման ընդլայնման նախագծի աշխատանքների իրականացման ծրագիրը և ծրագրի նպատակները:

Այնուհետև տեղի ունեցավ քննարկում և շահագրգիռ կողմերը կարծիքներ ներկայացրեցին:

Վեդու համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչ՝ Շ. Բաքոյանը հնչեցրեց համայնքին հուզող մի շարք հարցեր, որոնց վերաբերյալ տրվեցին բավարար պատասխաններ և մեկնաբանություններ: Շ. Բաքոյանը իր խոսքում գոհունակություն հայտնեց «ՍԵՆԴ ՈՐԼԴ» ՍՊԸ-ի մասին, համայնքի հետ հաջող համագործակցության համար, մասնավորապես Լուսառատ բնակավայրի բնակիչներին ընկերության կողմից տրամադրվել է ավազ՝ անվճար կամ զեղչված գներով, ինչպես նաև ընկերությունը իր ունեցած միջոցների սահմաններում կաջակցի բնակավայրի ճանապարհների բարեկարգման աշխատանքներին՝ հատկապես հանք գնացող ճանապարհին առկա կամրջի բարեկարգմանը:

Համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչ՝ Շ. Բաքոյանը իր խոսքում նշեց որ, կողմ է հանքի շահագործմանը, բայց պահանջում են կիրառել բնապահպանական, ափապաշտպան և համայնքի հանդեպ պատասխանատու կառավարման մեխանիզմներ: Համայնքը հանքի նախկին շահագործողների աշխատանքներից ունեցել է դժգոհություն և ակնկալում է, որ ընկերության նոր սեփականատերերը կբարելավեն պահանջված պայմանները: Ընկերության ներկայացուցիչները հավաստեցին, որ հանձնառու են իրենց օրենքով սահմանված պարտավորությունների և տրված խոստումների իրականացմանը:

Համայնքապետարանի աշխատակազմի բնապահպանության բաժնի աշխատակից՝ Ս. Կարապետյանը հետաքրքրվում էր, թե արդյոք տարածքում առկա են կարմիր գրքում գրանցված բույսերի և կենդանիների տեսակներ, որին ի պատասխան տեղեկացվեց, որ կենսաբազմազանության մասին տեղեկատվություն կտրամադրվի ուսումնասիրություններից հետո ՇՄԱԳ հաշվետվության փուլում, համաձայն գործող կարգի:

Համայնքի ներկայացուցիչներին մտահոգում էր նաև փոշեզանգվածի խնդիրը, որի մասին ընկերության ներկայացուցիչները մեկնաբանեցին, որ ավազը սովորաբար արդյունահանվելու է խոնավ վիճակում, հանքի տարածքում ավազի կուտակում ընկերությունը չի պլանավորում իրականացնել, սակայն փոշու առաջացման դեպքում կապահովեն ջրցանում: Փոշու առաջացման հավանական աղբյուրներ կարող են լինել նաև տարածքում գործունեություն իրականացնող այլ տնտեսվարողները:

Ամփոփելով հանրային քննարկման արդյունքները, համայնքի դրական արձագանքը, ազդակիր Վեդի համայնքի ներկայացուցիչները հավանություն են տալիս «ՍԵՆԴ ՈՐԼԴ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Լուսառատի ավազի հանքի շահագործման ընդլայնման նախագծի աշխատանքներին, հաշվի առնելով համայնքապետարանի հետևյալ առաջարկությունները.

1. Սոցիալական ներդրումների չափը հստակեցնելու դեպքում հաշվի առնել, այն հանգամանքը, որ Վեդի համայանքը ունի 18 գյուղական և 1 քաղաքային բնակավայր:
2. Նախատեսվող գործունեությունում 70% աշխատատեղերը տրամադրել ազդակիր Վեդի համայնքի բնակիչներին, հաշվի առնելով վերջիններիս 3 /երեք/ տարվա հաշվառում և անշարժ գույք ունենալու հանգամանքը:
3. Կանաչապատման բնագավառում իրականացնել փոշեպաշտպան միաշերտ ծառատունկ:
4. Սահմանափակել և վերահսկել բեռնատար մեքենաների գերբեռնվածությունը՝ ըստ տեխնիկական վկայականի:

Կից ներկայացվում է մասնակիցների ցանկը՝ 2 թերթ և հանրային քննարկումների էլեկտրոնային կրիչը:

Քննարկումների պատասխանատու՝

ՀՀ Արարատի մարզի

Վեդի համայնքի ղեկավար՝ / Գ. Սարգսյան

Ձեռնարկող՝ «ՍԵՆԴ ՈՐԼԴ» ՍՊԸ -ի տնօրեն՝ / Կ. Սարգսյան

Պատասխանատու՝ / / Շ. Բաքոյան

Արձանագրող՝ / / Ս. Կարապետյան

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

«ՍԵՆԴ ՈՐԼԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Արարատի մարզի Լուսառատի ավազի հանքավայրի շահագործման ընդլայնման նախագծի աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ ՀՀ Արարատի մարզի Վեդու համայնքապետարանի նիստերի դահլիճում (Թումանյան 6,1-ին հարկ) 19.12.2023թ. տեղի ունեցած հանրային քննարկումների /1-ին փուլ/

ք.Վեդի 19.12.2023թ.

h/h	Անուն, Ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը	Ստորագրություն
1.	[illegible]	[illegible]	
2.	[illegible]	[illegible]	
3.	[illegible]	[illegible]	
4.	[illegible]	[illegible]	
5.	[illegible]	[illegible]	
6.	[illegible]		
7.	[illegible]		
8.	[illegible]		
9.	[illegible]	[illegible]	
10.	[illegible]	[illegible]	
11.	[illegible]	[illegible]	
12.	[illegible]		
13.	[illegible]	[illegible]	
14.	[illegible]	[illegible]	
15.	[illegible]	[illegible]	
16.	[illegible]	[illegible]	
17.	[illegible]	[illegible]	
18.	[illegible]	[illegible]	
19.	[illegible]	[illegible]	
20.	[illegible]	[illegible]	

	[illegible]	[illegible]	
	[illegible]	[illegible]	
	[illegible]	[illegible]	
	[illegible]	[illegible]	
	[illegible]	[illegible]	
	[illegible]	[illegible]	
	[illegible]	[illegible]	
	[illegible]	[illegible]	
	[illegible]	[illegible]	
	[illegible]	[illegible]	
	[illegible]	[illegible]	
2.	[illegible]	[illegible]	
3.	[illegible]	[illegible]	
4.	[illegible]	[illegible]	
35.	[illegible]	[illegible]	
36.			
37.			
38.			
39.			
40.			
41.			
42.			
43.			
44.			
45.			
46.			
47.			
48.			
49.			